ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Կապան քաղաքի Ա. Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ ½ հասցեի հանդիսությունների սրահի կցակառույցի կառուցման աշխատանքների կատարման
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02

ք. Կապան

«24» մայիս 2021թ.

Կապանի համայնքապետարան, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԼԻԱՇԻՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վահե Պետրոսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***Կապան քաղաքի Ա. Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ ½ հասցեի հանդիսությունների սրահի կցակառույցի կառուցման*** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն Հավելված 1՝ Օրացուցային գրաֆիկի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 31703970 (երեսունմեկ միլիոն յոթ հարյուր երեք հազար ինը հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից 5283995 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	<<ԼԻԱՇԻՆ>> ՍՊԸ
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Ռ. Մինասյան 18/12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ԱՇԲ Կապան մ/ճ
ՀՀ 900312687016	ՀՀ 2470801172830010
ՀԿՀՀ 09426088	ՀԿՀՀ 09427418
	lia_shin@mail.ru
	+37494820993
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
«24» մայիս 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«Կապան քաղաքի Ա. Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ ½ հասցեի հանդիսությունների սրահի կցակառույցի կառուցման»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Մեկ միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Ընդհանուր արժեքը /հազ.դրամ/	Կշիռը հրավերով նախատեսված %	Կշիռը մասնակցի կողմից ներկայացված %
1	2	3	4	5	6	7	8
	Շինարարական աշխատանքներ						
	Քանդման աշխատանքներ						
1	Միջնորմային պատերի քանդում 400մմ հաստությամբ	խմ	3,10	8,85	27,44		
2	Միջնորմային պատերի քանդում 200մմ հաստությամբ	խմ	2,80	8,85	24,78		
3	Միջնորմային պատերի քանդում 100մմ հաստությամբ	քմ	21,10	0,95	20,05		
4	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում	քմ	22,08	1,35	29,81		
5	Դռան մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	քմ	4,14	4,25	17,60		
6	Թիթեղյա ջրորդանի քանդում 16,2մ	քմ	9,72	0,11	1,07		
7	Մուտքի բետոնե աստիճանների քանդում	խմ	0,30	17,70	5,31		
8	Գոյություն ունեցող մետաղական կոնստուկցիաներով շվաքարանի քանդում	քմ	2,0	6,60	13,20		
9	«3-1» ճակատի բետոնե սալվածքի քանդում	խմ	1,86	17,70	32,92		
10	3-1» ճակատին կից աճող հողի կտրում h=15սմ	խմ	3,8	1,72	6,54		
11	«3-1» ճակատի ցոկոլային հատվածի բազալտե ցալիկների քանդում	քմ	8,9	4,71	41,92		
12	Հախճասալիկների քանդում պատերից	ք.մ.	21,5	0,70	15,05		
13	Կերամիկական սալիկներով հատակի քանդում	քմ	38,50	0,50	19,25		
14	Շին աղբի բարձում ավտոմեքենաներին ձեռքով	տն	15,47	0,83	12,84		
15	Շին աղբի տեղափոխում 10կմ հեռավորության վրա	տն	15,47	2,92	45,17		
	Ընդամենը				**312,93**	1,17	1,18
	Հողային աշխատանքներ						
1	Խրամուղու փորում էքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում կողալիցքում	խմ	27,52	0,54	14,86		
2	Հիմքերի փորում էքսկավատորով 3-րդ կարգի գրունտներում բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին 0,5խմ շերեփի տարողությամբ	խմ	53,48	0,65	34,76		
3	Խրամուղու վերջնամշակում ձեռքով 3-րդ կարգի գրունտներում	խմ	8,0	5,40	43,20		
4	Ավելացած գրունտի տեղափոխում 10կմ հեռավորության վրա	տն	93,59	2,92	273,28		
5	Հողի հետադարձ լիցք բուլդոզերով	խմ	26,72	0,05	1,34		
6	Հողի հետադարձ լիցք փափուկ գրունտից ձեռքով	խմ	7,8	1,07	8,35		
	Ընդամենը				**375,79**	1,41	1,42
	Հիմքեր						
1	Ավազի նախապատրաստական շերտի կառուցում հիմնային հեծանների տակ	խմ	5,1	3,75	19,13		

2	Ժապավենային խամքարաբետոնե հիմքերի կառուցում Բ12,5 դասի բետոնով	խմ	31,2	40,60	1266,72		
3	Ժապավենային հիմքերի կառուցում Բ20 դասի բետոնով	խմ	8,8	55,50	488,40		
4	Միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների կառուցում Բ 20 դասի բետոնով Հ-1	խմ	8,38	79,68	667,72		
5	Ամրան Φ 8A I	տ	0,1853	572,00	105,99		
6	Ամրան Φ 18 A III	տ	0,690	582,00	401,58		
	Ընդամենը				**2949,54**	11,07	11,16
	Ե/բետոնե հիմնակմախք						
1	Միաձույլ ե/բետոնե սյուների կառուցում Բ 20 դասի բետոնով	խմ	10,24	96,78	991,03		
2	Ամրան Φ8 AI	տ	0,1947	572,00	111,37		
3	Ամրան Φ18 AIII	տ	0,448	582,00	260,74		
4	Միաձույլ ե/բ հակասեյսմիկ գոտու կառուցում Բ 20 դասի բետոնով	խմ	11,17	72,20	806,47		
5	Ամրան Φ8 AI	տն	0,2129	572,00	121,78		
6	Ամրան Φ18 AIII	տն	0,690	582,00	401,58		
	Ընդամենը				**2692,96**	10,11	10,19
	Պատեր						
1	Պատերի կառուցում ուղիղ կտրվածքի տուֆ քարով 40,0սմ հաստությամբ	խմ	43,78	27,21	1191,25		
2	Պատերի կառուցում 20,0 սմ հաստությամբ խարամաբետոնե բլոկներով 400*200*200	խմ	13,70	24,83	340,17		
3	Պատերի անցքերի լցնում թեթև բետոնով Բ 7,5	խմ	3,43	34,00	116,45		
4	Միջնորմների կառուցում 100մմ հաստությամբ (400x200x100)	ք.մ.	17,90	4,00	71,60		
	Ընդամենը				**1719,47**	6,46	6,51
	Կցակառույցի տանիք						
1	Վրադիր էլեմենտների տեղադրում մինչև 4,0կգ քաշով	տ	0,0401	291,78	11,70		
2	Թիթեղ 200x200x5	քմ	0,12	28,15	3,38		
3	Թիթեղ 150x100x5	քմ	0,39	28,15	10,98		
4	Ամրան Φ14 A III	կգ	20,10	0,58	11,66		
5	Մետաղական ֆերմաների մոնտաժում ուղիղ կտրվածքի խողովակներից	տ	0,440	61,02	26,86		
6	խողովակ N 100x100x3,0 պրոֆիլի	մ	25,3	5,64	142,69		
7	խողովակ N 80 x 80 x2,0 պրոֆիլի	մ	12,9	2,80	36,12		
8	խողովակ N 50 x 30 x2,0 պրոֆիլի	մ	46,8	1,50	70,20		
9	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	17,4	0,85	14,79		
10	Կախովի առաստաղի մետաղական կարկասի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով	տ	0,135	124,40	16,82		
11	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	98,0	1,14	111,72		
12	Մետաղական կավարամածի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով	տն	0,2593	73,90	19,16		
13	խողովակ N 40 x 30 x2,0 պրոֆիլի	մ	62,0	1,34	83,08		
14	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	97,2	0,84	81,65		
15	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ	քմ	55,93	1,18	66,00		
16	Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր գունավոր ցինկապատ թիթեղով 0,5մմ հաստությամբ КП 21-0,5	քմ	76,20	7,26	553,21		

16	Տանիքի գագաթագծի, թիթեղապատում գունավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	քմ	1,00	6,36	6,36		
17	Տախտակամած (գագաթագծի)	խմ	0,14	160,40	22,46		
18	Տանիքի գոգնոցի կառուցում գունավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	քմ	12,10	6,36	76,96		
19	Տանիքի ջրորդանների կառուցում գունավոր ցինկապատ թիթեղից 0,5մմ հաստ.	գծմ	16,2	9,28	150,34		
20	Տախտակամած	խմ	0,39	160,40	62,56		
21	Ջրորդան խողովակների տեղադրում ցինկապատ գունավոր թիթեղով Φ-100 մմ տրամագծով	մ	5,6	4,76	26,66		
22	Ջրորդան ձագարներ գունավոր	հատ	2,00	3,50	7,00		
23	Արմունկ գունավոր	հատ	2,00	1,15	2,30		
24	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում փրփրապլաստով d=10,0սմ	քմ	81,0	3,13	253,53		
	Կաթսայատան տանիք				0,00		
25	Վրադիր էլեմենտների տեղադրում մինչև 4,0կգ քաշով	տ	0,0071	291,78	2,07		
26	Թիթեղ 150x100x5	քմ	0,09	28,17	2,54		
27	Ամրան Φ14 A III	կգ	3,60	0,58	2,09		
28	Մետաղական կավարամածի կառուցում ուղղանկյուն կտրվածքի խողովակներով	տն	0,0221	73,90	1,63		
29	խողովակ N 30 x 30 x1,5 պրոֆիլի	մ	16,0	0,85	13,60		
30	Մետաղական հեծանների և պարզունակների մոնտաժում	տ	0,031	44,29	1,36		
31	խողովակ N 50 x 30 x2,0 պրոֆիլի (պարզունակ)	մ	8,4	1,50	12,60		
32	Անկյունակ N 50x50x4մմ պրոֆիլի (հեծան)	մ	2,6	2,05	5,33		
33	Մետաղական էլեմենտների յուղաներկում երկու շերտ	քմ	3,78	1,17	4,43		
34	Կախովի առաստաղի կառուցում գիպսակարդոնե սալիկներով	քմ	63,80	3,54	225,85		
	Ընդամենը				**2139,66**	8,04	8,10
	Պատուհաններ	-					
1	Նոր պատուհանների տեղադրում մետաղապլաստից սպիտակ 6.0սմ ապակե փաթեթով 4x4 սմ բացվող հայկական արտադրության պրոֆիլ	քմ	4,68	29,98	140,31		
2	Նույնը չբացվող	քմ	7,92	19,70	156,02		
3	Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 25սմ լայն. սպիտակ	քմ	12,60	0,74	9,32		
4	Պատուհանագոգերի արժեքը 25սմ լայն. սպիտակ	մ	13,80	2,45	33,81		
5	Պատուհանների արտաքին ջրահեռացման հարթակների կառուցում ցինկապատ թիթեղով 0,55մմ 20 սմ լայնությամբ	քմ	2,76	4,92	13,58		
	Ընդամենը				**353,04**	1,33	1,34
	Դռներ						
1	Դռան բլոկների տեղադրում ալյումինե, սպիտակ ջերմակամուրջով, ապակեփաթեթով 60մմ 4x4մմ օտարերկրյա պրոֆիլ կամ համարժեք բացվող մաս	քմ	3,78	83,38	315,18		
2	Դռան բլոկների վերնափեղկերի տեղադրում ալյումինե, սպիտակ ջերմակամուրջով, ապակեփաթեթով 60մմ 4x4մմ օտարերկրյա պրոֆիլ կամ համարժեք չբացվող մաս (պատուհան չբացվող)	քմ	1,08	45,48	49,12		
3	Դռան բլոկների տեղադրում ալյումինե, սպիտակ առանց ջերմակամուրջի, ապակեփաթեթով 46մմ 4x4մմ օտարերկրյա պրոֆիլ կամ համարժեք	քմ	7,56	47,00	355,32		

5	Դռան բլոկների տեղադրում մետաղապլաստե սպիտակ խուլ 60մմ ապակեփաթեթով 4+4մմ հայկական պրոֆիլ, կամ համարժեք	քմ	21,63	38,40	830,59		
	Ընդամենը				**1550,21**	5,82	5,87
	Հատակներ	-					
1	Խճի նախապատրաստական շերտի կառուցում 6,0սմ հաստությամբ	խմ	5,001	14,41	72,06		
2	Բետոնե հատակի կառուցում Բ 12,5 դասի բետոնով 5,0սմ հաստությամբ	խմ	4,168	43,00	179,20		
3	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	123,93	1,46	180,94		
4	Ջրամեկուսիչ շերտի կառուցում իզոգամով և բիտումով	քմ	30,40	4,49	136,50		
5	Լամինաթե հատակների կառուցում 7մմ հաստությամբ (շրիշակով, սպունգով)	քմ	46,51	6,15	286,04		
6	Հատակների կառուցում կերամիկական սալիկներով (400x400)	քմ	30,42	9,10	276,82		
7	Հատակների կառուցում կերամոգրանիտից 40x40սմ	քմ	57,17	10,70	611,72		
8	Կերամոգրանիտե սալիկներով հատակի շրիշակների կառուցում 10սմ բարձրությամբ	գծմ	47,7	1,37	65,35		
	Ընդամենը				**1808,63**	6,79	6,85
	Ներքին հարդարման աշխատանքներ	-					
1	Նոր կառուցված պատերի սվաղում գաջե շաղախով	ք.մ	209,7	2,32	486,50		
2	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջե շաղախով	քմ	11,40	5,69	64,87		
3	Պատերի սվաղում ցեմենտյա շաղախով հախճասալիկների տակ	քմ	99,80	2,90	289,42		
4	Պատերի երեսապատում հախճասալիկներով (400x200)	քմ	99,80	12,85	1282,43		
5	Պատուհանների և դռների արտաքին շեպերի սվաղում ցեմենտյա շաղախով	գծմ	36,6	0,70	25,62		
6	Գիպսաստվարաթղթե սալերով կախովի առաստաղի կառուցում	քմ	63,80	3,48	222,02		
7	Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	241,2	2,26	545,11		
8	Առաստաղի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	119,2	2,54	302,77		
9	Գիպսաստվաթղթե առաստաղի քսահարթում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	63,8	2,54	162,05		
10	Պլաստիկ շերտաերիզներով կախովի առաստաղի կառուցում սանհանգույցում	քմ	15,20	5,24	79,65		
	Ընդամենը				**3460,44**	13,0	13,10
	Արտաքին հարդարման աշխատանքներ						
1	Արտաքին պատերի սվաղում ցեմենտավազե շաղախով	ք.մ	111,30	2,58	287,15		
2	Արտաքին պատերի ցոկոլային մասի երեսապատում բազալտե սալիկներով 30 մմ հաստությամբ	քմ	29,70	16,78	498,37		
3	Արտաքին պատերի ներկում ջրադիմացկուն ճակատային ներկով	քմ	119,3	1,20	143,16		
	Ընդամենը				**928,68**	3,49	3,52
	Տաք ջրամատակարարում						
1*	Պատի ջեռուցման կաթսայի մոնտաժում, ECO43 24կվտ «BAXI»	հատ	1,0	482,30	482,30		

2	Պոլիպրոպիլենային PN 10, d=25x3.25մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	33,0	3,33	109,89		
3	Պոլիպրոպիլենային PN 10, d=20x3.0մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	21,0	3,54	74,34		
4	Պոլիպրոպիլենային PN 10, d=32x4,0մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	4,0	3,56	14,24		
5	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 32մմ	հատ	1,0	4,56	4,56		
6	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 25մմ	հատ	2,0	4,30	8,60		
7	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 20մմ	հատ	13,0	4,20	54,60		
8	Լվացարանի խառնիչների տեղադրում	հատ	6,0	6,70	40,20		
9	Ցնցուղի խառնիչների տեղադրում	հատ	7,0	10,38	72,66		
10	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 20x20x20մմ 90°	հատ	8,0	0,08	0,66		
11	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ32-90°	հատ	10,0	0,16	1,60		
12	Անցքերի շաղափում Φ40 մմ տրամագծով 50սմ հաստությամբ քարե պատի շարվածքում	հատ	1,0	4,90	4,90		
13	Անցքերի շաղափում Φ40 մմ տրամագծով 20սմ հաստությամբ քարե պատի շարվածքում	հատ	13,0	3,45	44,85		
	Ընդամենը				**913,40**	**3,43**	3,46
	Սառը ջրամատակարարում						
1	Լվացարանների ապամոնտաժում	հատ	2,0	1,14	2,28		
2	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	2,0	0,57	1,14		
3	Պոլիպրոպիլենային PN 10 d=32x3մմ խողովակների տեղադրում	մ	38,0	2,28	86,64		
4	Պոլիպրոպիլենային PN 10 d=25x2,3մմ խողովակների տեղադրում	մ	15,0	2,46	36,90		
5	Պոլիպրոպիլենային PN 10 d=20x1,9մմ խողովակների տեղադրում	մ	20,0	2,96	59,20		
6	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 25մմ	հատ	2,0	4,30	8,60		
7	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 20մմ	հատ	16,0	4,20	67,20		
8	Պոլիպրոպիլենային կեղտազտիչի տեղադրում Φ20մմ պղնձե	հատ	1,0	3,88	3,88		
9	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 32x32x32մմ 90°	հատ	11,0	0,22	2,42		
10	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ32-90°	հատ	9,0	0,16	1,44		
11	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 20x20x20մմ 90°	հատ	4,0	0,08	0,32		
	Ընդամենը				**270,02**	**1,01**	1,02
	Ջրահեռացում						
1	Պոլիպրոպիլենե կոյուղու խողովակների մոնտաժում Φ50x2,0մմ	մ	35,5	1,48	52,54		
2	Պոլիպրոպիլենե կոյուղու խողովակների մոնտաժում Φ110x2,7մմ	մ	11,0	2,50	27,50		
3	Լվացարանի տեղադրում (հախճապակյա)	կոմպ	6,0	21,75	130,50		
4	Զուգարանակոնքի տեղադրում	կոմպ	3,0	32,72	98,16		
5	Հոսակների տեղադրում Φ50	հատ	9,0	2,28	20,52		
6	Պոլիպրոպիլենային ձևավոր մասեր	հատ	12,0	0,58	6,96		
	Ընդամենը				**336,18**	**1,26**	1,27
	Ջեռուցում						
	Մոնտաժում						

1*	Պատի ջեռուցման կաթսայի մոնտաժում, փակ այրման, ծխատարով ECO3, 28կվտ,իտալական արտադրության կամ համարժեք	հատ	2,0	598,00	1196,00		
2*	Շրջանառու պոմպ BUP 15-3,0 U130 գերմանական արտադրության կամ համարժեք	հատ	2,0	77,48	154,96		
3	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում	ԷԿՄ	81,53	0,64	52,18		
4	Մարտկոցների արժեքը H=500 մմ	հատ	263,0	6,90	1814,70		
5	Մարտկոցների կախիչներ	հատ	50,0	0,60	30,00		
6	Մարտկոցների խցափակիչներ 1-1/2" R	հատ	25,0	3,30	82,50		
7	Ավտոմատ օդահանիչ 1/2M	հատ	25,0	3,41	85,25		
8	Մարտկոցների վերին փականների տեղադրում Φ 20մմ տրամագծով (անկյունային)	հատ	25,0	5,64	141,00		
9	Մարտկոցների ստորին փականների տեղադրում Φ 20մմ տրամագծով (անկյուն)	հատ	25,0	5,36	134,00		
10	Պոլիպրոպիլենային PN 10 Φ=20x3մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	68,0	3,34	227,12		
11	Պոլիպրոպիլենային PN 10 Φ=25x3,25մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	36,6	3,13	114,56		
12	Պոլիպրոպիլենային PN 10 Φ=32x4,0մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	50,0	3,26	163,00		
13	Պոլիպրոպիլենային PN 10 Φ=40x5,0մմ խողովակների տեղադրում ալյումինե շերտով	մ	54,0	5,90	318,60		
14	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 25մմ դատարկման	հատ	2,0	4,30	8,60		
15	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 40մմ	հատ	6,0	7,93	47,58		
16	Պոլիպրոպիլենային փականների տեղադրում Φ 25մմ	հատ	2,0	4,30	8,60		
17	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 40x20x40մմ	հատ	13,0	0,30	3,90		
18	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 20x20x20մմ	հատ	8,0	0,12	0,96		
19	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 25x20x25մմ	հատ	12,0	0,18	2,16		
20	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 32x20x32մմ	հատ	10,0	0,16	1,60		
21	Պոլիպրոպիլենային եռաբաշխիչ Φ 40x40x40մմ	հատ	4,0	0,50	2,00		
22	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ20-90°	հատ	10,0	0,07	0,65		
23	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ25-90°	հատ	2,0	0,09	0,18		
24	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ32-90°	հատ	4,0	0,17	0,68		
25	Պոլիպրոպիլենային անկյունակ Φ40-90°	հատ	10,0	0,45	4,50		
26	Պոլիպրոպիլենային փոխակերպիչ Φ 40x32մմ	հատ	4,0	0,16	0,64		
27	Պոլիպրոպիլենային փոխակերպիչ Φ 32x25մմ	հատ	6,0	0,09	0,54		
28	Կեղտազտիչի տեղադրում լատունե 1F	հատ	4,0	4,58	18,32		
29	Համակարգի փորձարկում	100 գծմ	2,086	8,65	18,04		
	Շինարարական աշխատանքներ				0,00		
1	Անցքերի շաղափում Φ50 մմ տրամագծով 40սմ հաստությամբ քարե պատի շարվածքում	հատ	10,0	4,89	48,90		
2	Անցքերի շաղափում Φ40 մմ տրամագծով 20սմ հաստությամբ քարե պատի շարվածքում	հատ	6,0	3,45	20,70		
3	Բետոնե հատակի քանդում (ակոսների բացում բետոնե հատակում) 5,4մ	խմ	0,22	17,70	3,82		
4	Բետոնե հատակի տակով անցնող մեկուսիչ խողովակի տեղադրում Φ42x1,9մմ	մ	6,10	1,35	8,24		
5	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	1,08	1,46	1,58		
6	Հատակների կառուցում կերամոգրանիտից (հատակի վերականգնում) 40x40սմ	քմ	1,22	10,70	13,05		

	Ընդամենը				**4729,11**	18,44	17,90
	Ներքին էլեկտրական լուսավորություն						
1	Մուտքի մետաղական բաշխիչ վահանակի տեղադրում եռաֆազ ավտոմատ անջատիչով, հաշվիչով	հատ	1,0	84,14	84,14		
2	Եռաֆազ ավտոմատ անջատիչների տեղադրում 63Ա	հատ	1,0	6,42	6,42		
3	Միաֆազ հաշվիչների տեղադրում 40Ա	հատ	1,0	18,03	18,03		
4	Էլ բաշխիչ վահանակի տեղադրում պլաստմասե ավտոմատ անջատիչով	հատ	2,0	10,58	21,16		
5	Միաֆազ ավտոմատ անջատիչների տեղադրում 25Ա	հատ	16,0	3,42	54,72		
6	Առաստաղային լուսատուների տեղադրում «Լեդ» մակնիշի	հատ	32,0	5,24	167,68		
7	Առաստաղին ամրացվող լուսատու մեկ շիկացման լամպով 100W	հատ	1,0	4,02	4,02		
8	Լուսատու պատին ամրացվող շիկացման լամպով 100 W	հատ	1,0	3,60	3,60		
9	Լուսատու կախովի առաստաղի	հատ	20,0	3,05	61,00		
10	Միաբևեռ անջատիչների տեղադրում փակ տեղադրման	հատ	14,0	1,02	14,28		
11	Երկբևեռ անջատիչների տեղադրում	հատ	3,0	1,73	5,19		
12	Միաբևեռ խրոցակային վարդակների տեղադրում	հատ	17,0	1,14	19,38		
13	Երկբևեռ անջատիչների տեղադրում փակ տեղադրման	հատ	16,0	1,61	25,76		
14	Հաղորդալար պղնձե ջիղով հատվածքը 2x2,5մմ² ՊՊՎԳ մակնիշի բազմաջիղ	100մ	4,7	55,95	262,97		
15	Հաղորդալար պղնձե ջիղով հատվածքը 2x4 մմ² ՊՊՎԳ մակնիշի բազմաջիղ	100մ	3,6	74,65	268,74		
16	Մալուխ բազմաջիղ պղնձե հատվածքը 4x25մմ² ՊՎՀ մակնիշի	100մ	0,90	795,60	716,04		
17	Մալուխ բազմաջիղ պղնձե հատվածքը ՊՊՎԳ 4x10մմ² մակնիշի	100մ	0,27	341,60	92,23		
18	Տուփ բաժանման	հատ	19,0	0,18	3,42		
19	Տուփ անջատիչի և վարդակի համար	հատ	51,0	0,11	5,61		
20	Անցքերի շաղափում 400մմ հաստությամբ պատերում	հատ	6,0	0,45	2,70		
21	Անցքերի շաղափում 200մմ հաստությամբ պատերում	հատ	12,0	0,30	3,60		
22	Ակոսների փորում	100մ	0,92	35,61	32,76		
23	Ակոսների փակում գաջե շաղախով	քմ	2,8	2,34	6,46		
	Ընդամենը				**1879,91**	**7,17**	7,12
	Ամբողջը				**26419,975**	**100,00**	
	ԱԱՀ 20%				5283,995		
	Ընդամենը				**31703,97**		

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Կապան, Ա. Մանուկյան 1-ին նրբանցք, թիվ ½ հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
ՀՀ 900312687016
ՀԿՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԼԻԱՇԻՆ>> ՍՊԸ
Ք. Կապան, Ռ. Մինասյան 18/12
ԱՇԲ Կապան մ/ճ
ՀՀ 2470801172830010
ՀԿՀՀ 09427418
lia_shin@mail.ru
+37494820993

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 24 » մայիս 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Կապան քաղաքի Ա. Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ ½ հասցեի հանդիսությունների սրահի կցակառույցի կառուցման»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	*Կապան քաղաքի Ա. Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ ½ հասցեի հանդիսությունների սրահի կցակառույցի կառուցման աշխատանքներ*	Պայմանագրի կնքման օր	Պայմանագրի կնքման օրվանից 90 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	Պայմանագրի կնքման օրվանից 90 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312687016
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԼԻԱՇԻՆ>> ՍՊԸ
Ք. Կապան, Ռ. Մինասյան 18/12
ԱՇԲ Կապան մ/ճ
ՀՀ 2470801172830010
ՀՎՀՀ 09427418
lia_shin@mail.ru
+37494820993

/ստորագրություն/
L.S.

Հավելված N 3
«24» մայիս 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	*Կապան քաղաքի Ա. Մանուկյան 1-ին նրբանցքի թիվ ½ հասցեի հանդիսություններ ի սրահի կցակառույցի կառուցման աշխատանքներ*	-	-	-	-	-	31703,97	31703,97	31703,97	31703,97	31703,97	31703,97	31703,97	31703,97

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312687016
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԼԻԱՇԻՆ>> ՍՊԸ
Ք. Կապան, Ռ. Մինասյան 18/12
ԱՇԲ Կապան մ/ճ
ՀՀ 2470801172830010
ՀՎՀՀ 09427418
lia_shin@mail.ru
+37494820993

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 24 » մայիս 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 24 » մայիս 2021թ. կնքված
ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն